

եկեղեցիներն են. ա) Ճալի հե – Նասր, բ) Էլ – Բասրա, այս մզկիթը կը կոչուի Քատրա, երկինքի մզկիթը: Ըստ աւանդութեան, այս մզկիթը անտեղն է՝ ուր Յակոբ լացաւ Յովսէփին վրայ, երբ անոր մահը սըտութեամբ իրեն հաղորդուեցաւ: Իսլամները նոյն տեղին վրայ կը յարգեն սոյն յիշատակը: գ) Ս. Յարութեան եկեղեցին (Մեծ Մզկիթը), անիկա աւարտած է 1169 ին. գետինը նուիրած է Երուսաղէմի Ամրի թագաւորը: Camille Enlart իր նկարագրութեան մէջ այս եկեղեցիին քանդակեալ խոյակներուն մասին ունի հետեւեալ հատուածը. «Հոն կը տեսնուին սաղարթանկարներ և խոյօղներ (volute). հիւսիսի կողմը՝ պտուղ մը, կեռանտի խոյօղ մը, ուրիշ խոյօղ մը, մարգկային գլուխ մը, կարիճ մը: Հարաւը կը գտնուին պատկերներ բոլորովին նման անոնց՝ որ կը զարգարեն Chatillon-sur-cher ի թակաղակներուն խորոփը: Կտրատուած գլուխ մը, թռչուն մը եւ գառնուկ մը կը յիշեցնեն գլուխները այն խոյերուն որ կը զարգարեն Կ. Պոլսոյ, Վենետիկի Ս. Մարկոսի թանգարաններուն բիւզանդական շատ մը խոյակներու անկիւնները:

Բայց տեսնուած այս գառնուկը հոս ունի խորհրդանշանական իմաստ մը, վասնզի թակաղակին երեսներուն վրայ ձախին կեցած յուշկապարիկ մը իր ժլպիտովը կ'աշխատի մոլորեցնել զայն, մինչ առջևն առիւծ մը կը ջանայ վախցնել զայն իր մոնչիւններով, այսպէս սպառնալիք և մոլորանք կը ճգնին քրիստոնեան ուղիղ ճանապարհէն մոլորեցնել» (Enl. էջ 284):

Յակոբի ցրնորը եւ եկեղեցին. — Դէպի հիւսիս ճանապարհէն քանի մը քայլ հեռու, կը տեսնուի աւերակներով ծածկուած բլրակ մը: Հոն է Յակոբի ջր-